Երբ որ պատահում էր վարպետ Փանոսին գնալ քրդերի «օբաները», նա նոյն յարգանքը եւ սիրալիր հիւրասիրութիւնն էր վայելում նրանց վրաններում: Օրերով, շաբաթներով, ամիսներով պահում էին իրանց մօտ, մի ընտանիքի վրանից միւս ընտանիքի վրանն էին հրաւիրում, ուտեցնում էին, խմեցնում էին, յետոյ զանազան պարգեւներով ճանապարհ էին դնում: Մէկը ընծայում էր մի գեղեցիկ ձի, միւսը՝ մի թանձր թաղիք կամ կապերտ, երրորդը՝ մի քանի ոչխարներ «ղաւուրմայի» համար, չորրորդը՝ մի տիկ պանիր, իւղ, մեղր եւ այլն:

Զարմանալի էր այդ եռանդոտ եւ վերին աստիճանի բանիմաց մարդու բարոյական ազդեցութիւնը քրդերի վրայ: Քրդերի զանազան ցեղերի մէջ, ուր նրա անունը յայտնի էր, ուր ճանաչում էին նրան՝ նա համարեա թէ պաշտելի էր: Լինում էին կռիւներ քրդերի մէջ, թշնամութիւն, արեան վրէժխնդրութիւն, բաւական էր, որ վարպետ Փանոսը յայտնուէր նրանց մէջ եւ մի երկու խօսք ասէր, իսկոյն կը տիրէր խաղաղութիւն: Շատ անգամ իրանք, քրդերը, փոխանակ իրանց շէյխերին դիմելու, հրաւիրում էին նրան վճռելու իրանց մէջ ծագած այս եւ այն վէճերը: Նա այն աստիճան հեղինակութիւն էր վայելում, որ ամենադժոարին խնդիրներում անգամ, կարող էր մի քանի խօսքով հաշտութիւն կայացնել:

Վարպետ Փանոսի բարեկամութիւնը քրդերի հետ ոչ սակաւ օգուտ էր բերում հայ գիւղացիներին: Ինձ պատմում էին այսպիսի դէպքեր. պատահում էր, որ հայ գիւղացիներից մէկի կովը, եզը կամ ոչխարները գողանում էին քրդերը. բաւական էր, որ գիւղացին գիտենար, թէ իր անասունները ո՞ր ցեղի մէջ են տարել կամ ո՞վ է իր գողը: Նա այլեւս փաշային կամ մուֆթիին չէր դիմում գանգատելու, ուղղակի գալիս էր վարպետ Փանոսի մօտ, յայտնում էր իր հետ պատահած անցքը: Վարպետը ուղարկում էր նրան նոյն ցեղի ցեղապետի մօտ, ուր տարել էին կողոպուտը: Գիւղացին գնում էր, ներկայանում էր ցեղապետին այսպիսի խօսքերով. «իմ այս եւ այն անասունները գողացել են. ասում են, որ ձեր «էլի» մէջն են բերել. ինձ ուղարկեց ձեր սպասին վարպետ Փանոսը, խնդրեց, որ գտնոի կողոպուտը»: Եթէ, իրաւ, գողացուած անասունները այնտեղ էին տարուած, իսկոյն գտնում էին եւ յանձնում տիրոջը իսկ եթէ տէրը սխալուել էր, նրան ցոյց էին տալիս կողոպուտի տեղը (քրդերի մէջ ոչ մի գողութիւն գաղտնի չէ մնում): Տէրը յայտնւում էր ցոյց տուած տեղը՝ դարձեալ միեւնոյն խօսքերով, եւ ետ էր ստանում իր կորուստը:

Այդպիսի դէպքերում վարպետ Փանոսը նամակ չէր գրում, այլ ամէն յանձնարարութիւն կատարւում էր բերանացի պատուերներով: Բայց որպէսզի հաւատային, որ ներկայացողը իսկապէս նրա կողմից էր ուղարկուած, նա